

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«Վանաձորի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտոր Ռուստամ Ռաֆիկի Մահակյանի և ՎՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահ Ռոբերտ Միքայելի Գրիգորյանի միջև 2020թ. հունվարի 31-ին կնքված կոլեկտիվ պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

1. Հիմք ընդունելով ՎՊՀ կոլեկտիվ պայմանագրի 7.5 կետը, որով ամրագրված է կոլեկտիվ պայմանագրում փոփոխություններ կատարելու կարգը, այն է՝ «<Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել փոխադարձ համաձայնությամբ Կողմերից մեկի գրավոր առաջարկությունը մյուս Կողմին ներկայացնելուց հետո 10 օրվա ընթացքում համատեղ քննարկման և համապատասխան համաձայնագիր կազմելու միջոցով>>», համաձայնության եկան 2.20 կետը ավելացնել հետևյալ բովանդակությամբ.

Արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ՝ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում գործատուի կողմից աշխատողի հետ ինչպես անորոշ ժամկետով, այնպես էլ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետը լրանալը լուծելիս աշխատանքը պահպանելու նախապատվության իրավունքից օգտվում են բարձր մասնագիտական որակավորում ունեցող աշխատողները:

Այն դեպքում, երբ աշխատողներն ունեն նույն կարգավիճակը, նախապատվությունը համապատասխանաբար տրվում է այն աշխատողին, ով՝
ա. իր խնամքի ներքո ունի առնվազն երկու անչափահաս երեխա,
բ. հանդիսանում է ընտանիքի միակ կերակրողը կամ իր խնամքի ներքո ունի ընտանիքի ինքնուրույն վաստակ չունեցող անաշխատունակ անդամ
գ. տվյալ գործատուի մոտ աշխատանքային գործունեության ընթացքում ձեռք է բերել աշխատանքային խեղում, մասնագիտական հիվանդություն կամ հաշմանդամության որևէ կարգ,
դ. տվյալ գործատուի մոտ ունի 10 տարուց ավելի աշխատանքային ստաժ,

ե. առանց աշխատանքից կտրվելու բարձրացրել է իր մասնագիտական որակավորումը,

զ. հայրենիքի պաշտպանության ժամանակ վիրավորվել և ձեռք է բերել հաշմանդամության որևէ կարգ ,

է. իր աշխատանքային պարտականությունների կատարման ժամանակ ցուցաբերել է բարձր արդյունավետություն:


2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում 2020թ. մայիսի 25 –ին:

3. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակներից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

4. Սույն համաձայնագիրը համարվում է 2020թ. հունվարի 31-ին կնքված կղեկտիվ պայմանագրի բաղկացուցիչ մասը:

Գործատուի կողմից

«Բնատուր Կապուցարն համալսարան»
հիմնադրամի ղեկավար
Ռուստամ Ռաֆիկ Մահալյան

Աշխատողների կողմից

ՎՊՀ արհեստակցական
կազմակերպության նախագահ
Ուրերտ Միքայել Գրիգորյան

